ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010 Երևան Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594015
Էլ. փոստ՝sirvard.gevorgyan@justice.am

№ /30,3/33258-2024
«21» օգոստոսի 2024թ.

Այսպես, Օրենքի29.2-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը դադարեցնում է կառավարչի որակավորումը, եթեվերջին մեկ տարվա ընթացքում կառավարիչ ընտրվելու դեպքում առնվազն երեք անգամ սույն օրենքով չնախատեսված հիմքով հրաժարվել է իր պարտականությունները կատարելուց:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝

«1. Նորմատիվ իրավական ակտերով սահմանված ժամկետները հաշվարկվում են տարիներով, ամիսներով, օրերով և ժամերով:

2. Տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

3. Տարիներով հաշվարկվող ժամկետը լրանում է ժամկետի վերջին տարվա համապատասխան ամսին և ամսաթվին: (...) :»:

Այսպիսով, վերը նշված կարգավորումների վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել, որ Օրենքի 29.2-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով նախատեսված ժամկետի սկիզբ պետք է ընդունել առաջին անգամ (տվյալ օրացույցային տարվա ընթացքում)օրենքով չնախատեսված հիմքով իր պարտականությունները կատարելուց հրաժարվելու պահը, որից սկսած մեկ օրացույցային տարվա ընթացքում ևսերկու անգամ նույն հիմքով իր պարտականությունները կատարելուց հրաժարվելուդեպքում վրա է հասնում Օրենքով նախատեսված բացասական հետևանքը: Այսպես, որպես օրինակ, եթե կառավարիչը վերը նշված հիմքով իր պարտականությունները կատարելուց հրաժարվում է 21.08.2024 թվականին, այնուհետև մինչև 21.08.2025 թվականը ևս երկու անգամ նույն հիմքով հրաժարվում է իր պարտականությունները կատարելուց, ապա Օրենքի 29.2-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի հիման վրա Արդարադատության նախարարը դադարեցնում է կառավարչի որակավորումը:Ավելին, նույն սկզբունքով ժամկետի հաշվարկը կարելի է սկսել վերջին անգամ օրենքով չնախատեսված հիմքով իր պարտականությունները կատարելուց հրաժարվելու պահից(օրինակ, եթե կառավարիչը վերը նշված հիմքով իր պարտականությունները կատարելուց հրաժարվում է 21.08.2024 թվականին, և դրան նախորդող 1 օրացույցային տարվա ընթացքում՝ մինչև 21.08.2023 թվականը, ևս երկու անգամ նույն հիմքով հրաժարվել է իր պարտականությունները կատարելուց):

Ողջ վերոգրյալի հաշվառմամբ՝ գտնում ենք, որՕրենքի 29.2-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի կարգավորումը բավարար հստակ է և տարընկալումների տեղիք չի տալիս:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Invalid signature

X

ՍԻՐՎԱՐԴ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Signed by: GEVORGYAN SIRVARD 6804830105 **ՍԻՐՎԱՐԴ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

Կատարող՝ Ռոմիկ Հայրապետյան
«Օրենսդրության զարգացման կենտրոն»

հիմնադրամի ավագ իրավաբան-փորձագետ
Հեռ.՝ 010 594 105